ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/192

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն
Մասնակից՝ «Տաթևիկ Ասատրյան Տիգրանի» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ» ծածկագրով գնանշման հարցում, հանդերձանքի, անկողնային պարագաների և տնտեսական ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11659-2021 գրությամբ «Տաթևիկ Ասատրյան Տիգրանի» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) 12.07.2021թ.-ի թիվ 20/738 գրության հիման վրա, «Տաթևիկ Ասատրյան Տիգրանի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնվել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 20.07.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 21.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/192 համարի ծածկագիրը:

28.07.2021թ.-ին և 30.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 28.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.07.2021թ.-ին:

2. <u>ՀՀ Ազգային անվտանգության ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 12.07.2021թ.-ի թիվ 20/738 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել հանդերձանքի, անկողնային պարագաների և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով 18.06.2021թ.-ի թիվ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման մասնակից՝ «Տաթևիկ Ասատրյան Տիգրանի» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Տաթևիկ Ասատրյան Տիգրանի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.07.2021թ.-ին գրությամբ դիմել է «Տաթևիկ Ասատրյան Տիգրանի» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից

20.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11659-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/192 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Ազգային անվտանգության ծառայության կողմից հանդերձանքի, անկողնային պարագաների և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով 18.06.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ),

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Տաթևիկ Ասատրյան Տիգրանի» Ա/Ձ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցումին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. 06.07.2021թ.-ին «Տաթևիկ Ասատրյան Տիգրանի» Ա/Ձ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ մասնաւսցել է ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն կարիքների համար՝ հանդերձանքի, անկողնային պարագաների և տնտեսական ապրանքների ձեռքբերման հայտարարված գնանշման հարցման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 12-րդ, 16-րդ, 20-րդ չափաբաժինների հրավերի մատակարարման գնման ընթացակարգին, սակայն գնային առաջարկի մեջ վրիպակի պատճառով տեղի է ունեցել ոչ միտումնավոր տեխնիկական անճշտություն, որը, ելնելով ՀՀ «Գնումների մասին» օրենքից, հնարավոր չէ ուղղել, հետևաբար մատակարարումները կատարել տվյալ գներով անհնար է: Մասնակիցը, նշվածով պայմանավորված, հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից և խնդրել հաշվի չառնել իր կողմից գնային ներկայացված առաջարկը և բացառել այն:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.07.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով «Տաթևիկ Ասատրյան Տիգրանի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գրությունը, որոշել է 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 12-րդ, 16-րդ և 20-րդ չափաբաժինների մասով մերժել մասնակցի կողմից ներկայացված հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11659-2021 գրությամբ «Տաթևիկ Ասատրյան Տիգրանի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության կողմից հանդերձանքի, անկողնային պարագաների և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով 18.06.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Տաթևիկ Ասատրյան Տիգրանի» Ա/Ձ-ն 06.07.2020թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ մասնակցել է ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն կարիքների համար՝ հանդերձանքի, անկողնային պարագաների և տնտեսական ապրանքների ձեռքբերման հայտարարված գնանշման հարցման 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 12-րդ, 16-րդ, 20-րդ չափաբաժինների հրավերի մատակարարման գնման ընթացակարգին, սակայն գնային առաջարկի մեջ վրիպակի պատճառով տեղի է ունեցել ոչ միտումնավոր տեխնիկական անճշտություն, ինչը ելնելով ՀՀ «Գնումների մասին» օրենքից, հնարավոր չէ ուղղել, հետևաբար մատակարարումները կատարել տվյալ գներով անհնար է: Մասնակիցը, նշվածով պայմանավորված, հրաժարվել է գնման գործընթացի հետագա մասնակցությունից և խնդրել հաշվի չառնել իր կողմից գնային ներկայացված առաջարկը և բացառել այն:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Տաթևիկ Ասատրյան Տիգրանի» Ա/Ձ-ն Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո, հրաժարվելով «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11659-2021 գրությամբ «Տաթևիկ Ասատրյան Տիգրանի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/192 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Տաթևիկ Ասատրյան Տիգրանի» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**